

## Կ ա Ր Ծ Ի ք

ՀՀ Ազգային Ժողովի 1996-ի դեկտեմբերի 2-ին ընդունած

### **Քաղաքաշինության մասին օրենքի**

վերաբերյալ

1. Ընդունված օրենքը կարգավորում է քաղաքաշինության հետ կապված միայն վարչական, գույքային եւ նմանատիպ այլ հարաբերությունները, եւ բոլորովին անտեսվում են խնդրի շինարարական եւ ճարտարապետական կողմերը: Օրենքը չափազանց վերացական է եւ չի բխում հանրապետությունում տիրող քաղաքաշինական իրողությունից: Փորձ չի արված լուծել կուտակված բազմաթիվ խնդիրները:

2. Անհրաժեշտ է լրացնել մասնագիտական հասկացությունների սահմանումների ցուցակը: Եղած սահմանումների մի մասը ցրված է տարբեր հոդվածներով: Իմաստ ունի դրանք հավաքել Ընդհանուր դրույթների մասում:

Մասնավորապես.

անհրաժեշտ է տալ պատմական հուշարձանի, հնագիտական հուշարձանի, ճարտարապետական հուշարձանի, քաղաքաշինական հուշարձանի, ինչպես նաեւ համալիր հուշարձանի սահմանումները: Այս կապակցությամբ, անթույլատրելի է անհեթեթ է հոդված 23-ը, քանի որ մասնագիտական տեսակետից հուշարձանը, եթե այն այդպիսին ճանաչվել է, չի կարող ոչ միայն քանդվել, այլեւ տեղափոխվել: Դա կարող է կատարվել միայն եթե տվյալ կառույցը հայտարարվի պատմական կամ գեղարվեստական արժեք չունեցող, այսինքն եթե փոխվի նրա կարգավիճակը:

անհրաժեշտ է հստակորեն սահմանել հոդված 6-ի չորրորդ մասի ա) կետում եւ հոդված 22-ում կիրառվող «ընդացիկ նորոգում» հասկացությունը, այլապես այդ անվան տակ քաղաքների տեսքն ապականող, անխտարա-հիգիենիկ, հակահրդեհային, հակաերկրաշարժային պայմանները խախտող ցանկացած փոփոխություններ կարող են կատարվել:

3. Ըստ այս օրենքի քաղաքաշինության գործընթացի կարգավորող փաստաթղթերի կազմումը հիմնականում թողնված է գործադիր իշխանությանը: Մասնավորապես, անթույլատրելի է ամբողջովին թողնել գործադիր մարմիններին շինարարական եւ ճարտարապետական նորմերի մշակումը (հոդվածներ 24, 25, 26): Սա կարող է բերել խառնաշփոթի եւ կամայականությունների: Այն դեպքերում, երբ քաղաքաշինական որոշակի, հիմնարար չափանիշների խախտումը կարող է բերել քաղաքացիների առողջության, քաղաքների ճարտարապետական տեսքի, պատմական հուշարձանների պահպանման եւ այլ տեսակետներից անուղղելի հետեւանքների, իմաստ ունի դրանց կարգավորումը ներառնել օրենքի մեջ:

Օրինակ.

կառուցապատման համար թույլատրելի տարածքների չափանիշները: Իմաստ ունի արգելել կառուցապատման համար հատկացնել գյուղատնտեսության համար պիտակի հողերը, անկախ ֆինանսատեխնիկական հիմնավորումից: Օրինակ՝ փոքր թեքություն ունեցող տարածքները (սահմանել տեղանքի թեքության անկյունը), որոշակի բերրիություն ունեցող հողերը (սահմանել կենսաքիմիական եւ այլ չափանիշները), անտառապատ տարածքները, երկրաբանորեն արժեքավոր տարածքները եւ այլն:

կիրառվող շինարարական համակարգերի տիպերը: Իմաստ ունի արգելել այն համակարգերի եւ շինարարական տեխնոլոգիաների կիրառումը, որոնք արդեն իսկ բացահայտել են իրենց ոչ պիտակիությունը Հայաստանի պայմաններում (հատկապես Շիրակի երկրաշարժի ժամանակ), մասնավորապես՝ սահմանափակել բնակելի շենքերի հարկայնությունը: Եւ հակառակը խրախուսել (օրինակ համապատասխան հարկային քաղաքականության միջոցով) փորձված եւ հուսալի տեխնոլոգիաների կիրառումը, օրինակ՝ պատային կոնստրուկցիաները:

արգելել որոշակի սահմանից ցածր ջերմային դիմադրություն ունեցող պարփակող կոնստրուկցիաների կիրառումը (օրինակ՝ արտիկ տուֆից պատրաստված 50 սմ հաստության պատի ջերմային դիմադրությանը համարժեք),

եւ այլն:

4. Անհրաժեշտ է հողված, որում (նշելով ժամկետները) կամրագրվեն ՀՀ Շինարարական նորմերի եւ կանոնների (ՇՆԵԿ) հավաքածուի գոյությունը, կառուցվածքը, ստեղծման պատասխանատուները, եւ ինչ կանոններով կամ այլ նորմատիվ ակտերով պետք է առաջնորդվել անցումային շրջանում (գուցե դա նախկին ԽՍՀՄ-ի համապատասխան փաստաթղթերը պիտի լինեն՝ СНиП, ЕНиР, ЕСКД եւ այլն):

5. Անհրաժեշտ է նախատեսել օրենքի պահանջներին չբավարարող կառույցների (նորակառույց եւ հին) վերափոխման կամ վերացման կարգը: Օրինակ՝ վթարային, քաղաքի տեսքն ապականող եւ նման այլ շենքերի եւ կառույցների: (հողված 2գ)

6. Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ այս տեսքով Օրենքը դեռեւս անկատար է, ունի հիմնարար վերամշակման եւ լրացման անհրաժեշտություն:

**Ռուբեն Հակոբյան,**

*Երեվանի Ճարտարապետա-Շինարարական Ինստիտուտի Ճարտարապետության տեսության եւ պատմության ամբիոնի դասախոս*

**14 հունվարի 1997**